

Գուրգեն Մահարի

Սեւ մարդը

4

Կիա գետից ոչ հեռու, դեպի հյուսիս-արևելք, ոչ խիտ անտառներով շրջապատված ընդարձակ մի բացատի վրա փռվել է աշխատանքային ուղղիչ ճամբարը՝ շրջապատված տախտակե սրածայր ցանկապատով և փշալարերով: Ապրում են ճամբարի բնակիչները իրենց մանր ու մեծ հոգսերով, մանր ու մեծ տխրություններով, մանր ու մեծ ուրախություններով: Բարաքների մի մասը գետնափոր է, մի քանիսը գետնի վրա բարձրացած, բաղնիքը կիսագետնափոր է, դիարանը՝ կրկնակի գետնափոր, երկհարկանի շինություն՝ ոչ մի: Ճամբարի շենքերից ավելի բարի տեսք ունեն իրար զուգահեռ կանգնած հիվանդանոցի երկու շենքերը և երրորդը, որի կեսը բուժարան է, կեսը հիվանդանոցի խոհանոցը:

Ամռանը գազոնների առաջ մշակվում են գազոններ, բարձրանում են խոտեր, ծաղկում են ծաղիկներ, իսկ հիմա, երբ ձմեռ է, անհրապույր է ճամբարի տեսքը, պաղ ու խստահայաց: Բուն ճամբարից բարձր տախտակե ցանկապատով անջատված են երեք մեծ բարաքներ, իսկ այնտեղ ապրում է ճամբարային բնակչության իգական սեռը: Բացի երեք բնակելի բարաքներից և տախտակաշեն զուգարանից, կանանց գոտում ուրիշ ոչ մի կենցաղային հարմարություն չկա, որովհետև կանայք օգտվում են տղամարդկանց գոտում գտնվող հարմարություններից: Փոքրիկ հիվանդանոցներից մեկում առանձնացված է մի փոքրիկ սենյակ՝ չորս մահճակալով, կին հիվանդների համար: Կանայք բրիգադ առ բրիգադ գալիս, լողանում են բաղնիքում, երբ

տղամարդկանց գոտին երրորդ երազն է տեսում: Բրիգադների մատակարարուհիները հաց, նախաճաշ, ճաշ և ընթրիք են ստանում տղամարդկանցից առաջ: Ինչպես ազատ, այնպես էլ կալանավոր հսկիչներն աշխատում են, որպեսզի կանայք և տղամարդիկ հեռու լինեն իրարից, չհանդիպեն իրար, չգայթակղվեն, անկարգություններ թույլ չտան: Մի դեպքում է միայն ճամբարի պահականին աչք փակում կանանց և տղամարդկանց հանդիպման վրա և այդ էլ, երբ նրանք հանդիպում են իրար կրկնակի գետնափորում, երբ նրանք ազատ ու համարձակ պառկում են կողք-կողքի՝ քնած հավիտենական քնով, անզարթնելի նինջով:

Ճաշից հետո սկսեց ձյուն գալ: Օդը տաքացավ, քնքշացավ, մեղմացավ, և ձյունը խոշոր փաթիլներով դանդաղ ու հանդիսավոր սկսեց իջնել բաց երկնքից: Ճամբարի գոտուց դուրս կանգնած հրշեջ աշտարակը չի երևում, մշուշվել է մշուշում, բայց ահա լսվում է այնտեղից խուլ ու փափուկ՝ զանգի երեք հարված: Ժամը երեքն է:

Ամբողջ ժամանակ ճաշի ընթացքում և նրանից հետո Աշոտ դային լուռ էր ու մտազբաղ: Փորձեց երգել, բան դուրս չեկավ: Վառեց մի ծխախոտ և կիսատ՝ սեղմեց իր ձեռքով ինձ համար բրուտանոցում պատրաստած և թրծված կավե մոխրամանում, հետո թե՝

— Գնա՛նք, գործ կա:

Մենք տաք հագնվեցինք ու դուրս եկանք: Ձյուն: Օդը տաք է, քնքուշ ու մեղմ, դանդաղ ու հանդիսավոր իջնում է ձյունը խոշոր փաթիլներով, բաց անտառների, դաշտերի, ճամբարի, բարաքների և բարաքների տանիքներից վեր թառած, ձողերի վրա ամրացված սարյակների բուն-տնակների վրա, որոնք թափուր են հիմա: Շուրջը տիրում է խուլ, ձյունե, բամբակե լռություն, մի տեսակ լուռ լռություն: Աշոտ դային շնչում է ամբողջ կրծքով, ես հետևում եմ նրա օրինակին, փափուկ օդի հետ ևս ներս եմ քաշում խոհանոցի ծխնելույզից տարածվող ծխի սուր բուրմունքը և իմ սիրտը լցվում է ինչ-որ անհուն կարոտով, անհուն անձկությամբ, անհուն սիրով՝ կայնքի, աշխարհի հանդեպ, ճամբարի գլխավոր ճանապարհի վրա շրջող հերթապահ ավազ տաջիկ Եունուսի և ընդհանուր խոհանոցից դեպի հիվանդանոցի խոհանոց սրարշավ վազող մոխրագույն

սիբիրյան կատվի, լուռ ու մտախոհ Աշոտ դայու հանդեպ, որը, չգիտես ինչու, գնում է բաղնիքի ուղղությամբ:

Նա հրում է բաղնիքի դուռը, բաղնիքի խոնավ, գոլ օդի գոլորշին շոյում է մեր դեմքը . սանդուղքներից վեր է վազում չինացի Վանյան և ժպտում .

— Նե՛լզա, նե՛լզա, կարանտի՛ն . . .

— Էտապում մի հայ կա, դուրս կանչի մի րոպեով, — հրամայելու պես խնդրում կամ խմդրելու պես հրամայում է Աշոտ դային:

— Արմանի՞ն, — հարցնում է Վանյան և ցուցամատով ձախից աջ մի գիծ է քաշում իր ճակատի վրա և հարցական նայում Աշոտ դայուն .

— Այո՛, այո՛, — հաստատում է Աշոտ դային:

Վանյան նայում է շուրջը:

— Չորտ եվո գնա՛յ, կարանտի՛ն, — քրթմնաջում է նա և դուռը ծածկում:

Քիչ հետո դուռը բացվում է և դռների մեջ հայտնվում է Սանասարը .

— Ի՞նչ կա, — հարցնում է նա՝ անհաջող անտարբերությամբ:

Աշոտ դային նայում է նրան անթարթ աչքերով և կամաց ասում .

— Տոպրակը բեր:

Սանասարը նայում է ինձ .

— Ի՞նչ է ասում, — հարցնում է նա այն տոնով, երբ լեզուն չեն հասկանում և դիմում են թարգմանի օգնությանը:

— Տոպրակը տո՛ւր, անպետքի մեկը, — ձայնը չի բարձրացնում Աշոտ դային:

— Դե՛ . դե՛, շառդ քեզ քաշի, — ֆշշում է Սանասարը:

Յատուկ Պոէմ

Ի՞նչ պատահեց . ինչ որ պատահեց, պատահեց մի ակնթարթում . ես միայն տեսա, որ Սանասարը երկու ձեռքով ծածկեց դեմքը, իսկ մատների արանքից արյունը ծորաց դուրս:

— Տոպրակը, — պնդեց Աշոտ դային այս անգամ բարձրաձայն:

Նա թափ առավ հայտնի չէ, երկրորդ հարվածը հասցնելո՞ւ, թե՞ պարզապես վախեցնելու համար, բայց այդ միջոցին մեկը բռնեց երկու ձեռքով նրա բազուկը: Կոմենդանտի օգնական Նոդարի Անջաբաձեն էր: Բարձրահասակ, առնական, գեղեցկադեմ Անջաբաձեն գրկեց Աշոտ դայուն, երեսը քսեց նրա երեսին և հարցրեց .

— Վ չո՞մ դելո, կացո . . .

— В чем дело? А дело в том, что Աշոտ դայուն մեկուսարան տարան: Ես պառկել եմ բարաքում, անկողնու վրա: Չկա Աշոտ դային, և ես ինձ զգում եմ որբացածի նման: Իջնում է երեկոն աշխարհի և ճամբարի վրա . բարաքում, այստեղ-այնտեղ վառվում են անհատական ճրագները: Ջամանովը գլխին է քաշել ծաղկազարդ, հայրենական կեղտուկուր վերմակը և քնել է: Աշոտ դայուն մեկուսարան տարան . այդ նշանակում է, որ նա օրական երեք հարյուր գրամ հաց պիտի ստանա և մի բաժակ ջուր . ոչ ավել, ոչ պակաս: Պետք էր մտածել նրան հաց հասցնելու մասին . այդ մասին պետք է խոսել Անջաբաձեի հետ: Մոտենում է բրիգադիր Աբլապը և հարցնում է ինձ .

— Նոր բան չգիտե՞ս:

— Աշոտին տարան պետի մոտ հարցաքննության:

Ես չեմ համբերում, հագնում եմ վալենկաներս, ականջավոր գլխարկս և ուզում եմ տախտակամածից վար իջնել, երբ հայտնվում է Սանասարը: Նրա ծնոտը կապված է թարմ վիրակապով . ըստ երևույթին Աշոտ դային հանաք չէր արել: Բայց ինչո՞ւ եկավ նա: Ի՞նչ գործ ունի այստեղ:

— Տեսա՞ր ինչ արավ, — հարցնում է նա կոտրված:

Յատուկ Ոռեմ

— Տեսա, — ասում եմ ես:

— Ես նրան կսպանեմ, — ասում է նա և ինքն էլ չի հավատում իր ասածին:

Ես ասելիք չունեմ . պարզ է, որ նա այդ նպատակով չի եկել:

— Ես նրան կսպանեմ, — կրկնում է նա բռնելով սյունից, ըստ երևույթին կարծելով, որ ես չլսեցի:

— Լսեցի, — ասում եմ ես, — դու նրան կսպանես:

— Կարծում ես չե՞մ սպանի, — ասում է նա խեղճացած աքլորի նման:

— Կարծում եմ չես սպանի, — համաձայնում եմ ես:

Նա մտածում է: Պարզ է, որ նա ասելիք ունի:

— Ջեմլյակը զեմլյակին բեդամաղ չպիտի անի:

— Իսկ դո՞ւ, — հարցնում եմ ես:

— Ես ի՞նչ: Ես հաշիվ չեմ:

— Իսկ ինչո՞ւ հաշիվ չես:

— Ես կորած մարդ եմ, — լինում է պատասխանը:

Ես նայում եմ նրա դեմքի երևացող մասերին . վիրակապերի մեջ նա թվում է բոլորովին երիտասարդ, համարյա պատանի, համարյա, ինչպես ինքն է ասում՝ կորած մարդ:

Բարաքը կարծես լուսավորվում է: Առույգ քայլերով, ժպտադեմ, ներս է մտնում Աշոտ դային: Նա տեսնում է Սանասարին և ամենևին չի զարմանում: Նա հանում է իր կիսամաշ քուրքը և թեթև բարձրանում է տախտակամածին:

Յատուկ Դոէմ

— Էսպես, — ասում է նա, հետո նայում է Սանասարի վրա: — Բարձրացի՛ր, նստի՛ր, հերո՛ս, — ասում է նա:

Հերոսը բարձրանում է ու նստում: Ինձ զարմանք է պատճառում այն հանգամանքը, որ Աշոտ դային ոչ մի խոսքով կամ ակնարկով չի անդրադառնում այն պատճառին, որի արդյունքը եղավ այն, որ նստած է մեր դեմ Տայշետից ժամանած ասպետը, վիրակապով փաթաթված դեմքով: Խոսակցությունը գնում է, ավելի շուտ, Աշոտ դային տանում է կենցաղային մանրուքի, եղանակի, ծանրոցների, բրուտանոցի և հարակից խնդիրների մասին: Իսկապես որ զարմանալի մարդ է այս Աշոտ դային, խփեց, արնաշաղախ արավ մարդուն . վիրակապերի մեջ կորցրեց դեմքը, իսկ հիմա նստել փիլիսոփայում է .

— Բոլոր նշաններից երևում է, որ այս տարի գարունը շուտ է բացվելու:

«Իսկ ճամբարի պետը ինչո՞ւ էր կանչել քեզ, — ուզում եմ հարցնել ես, — ի՞նչ պատահեց, որ ազատվեցիր մեկուսարանից, ինչի՞ մասին խոսեց ճամբարի պետը, գուցե այն մասին, որ այս տարի գարունը շո՞ւտ է բացվելու: Իսկ Տայշետի հերոսն իր հերթին . . . ինչո՞ւ չի ասում, Աշոտ դայի, ես եկել եմ քեզ սպանելու . . . »:

Ջամանովը շարժվեց . այդ երեքս էլ նկատեցինք և երեքս էլ ցույց տվինք, որ չնկատեցինք: Նա չզարթնեց, շուռ եկավ մի կողքի, և նրա չափավոր խռմփոցը լռեց:

Ես չգիտեմ, թե ինչի՞ մասին չխոսվեց այդ օրը, սակայն ըստ էության ոչ մի խոսք, եթե չհաշվենք այն, որ մի անգամ, երբ խոսքը գնում էր աշխատանքի մասին, Աշոտ դային թոռուցիկ հարցրեց Սանասարին, — որտե՞ղ ես աշխատելու, — և առանց սպասելու նրա պատասխանին, խոսեց բրուտանոցի ընդարձակման անհրաժեշտության մասին և որ ներկա բրուտանոցը չափազանց նեղվածք է, — կգաս, կտեսնես, — նորից նա խոսքը կարծես պատահաբար նետեց Սանասարին:

Սանասարը գնաց ինչպես եկել էր, առանց հետք թողնելու իր ետևից: Ասել առանց հետք թողնելու իր ետևից՝ այնքան էլ ճիշտ չէր լինի, որովհետև քիչ հետո,

երբ զարթնեց Զամանովը, վերմակը մի կողմ նետեց և կարգի բերեց բարձը, բարձի տակից դուրս քաշեց ծխախոտով լեցուն իր տոպրակը .

— Թութո՛ւնս, գտա՛ թութունս, քյահըրբարի՛ պես թութունս, — հրճվանքով գոռաց նա բարաքով մեկ:

. . . Բարաք մտավ վերակարգիչ Սիդորովը՝ անբաժան ֆաներան ձեռքին: Կարճահասակ էր նա, կլոր, փոքր աչքերի վրա շեկ հոնքեր . նա խոժոռում է դեմքը և գոռում բարաքի ավագի և օրապահի վրա .

— Ես քեզ Կոլոկոլնիկով, քո Նուրանբաևի հետ կուղարկեմ այնտեղ, ուր խեցգետիններն են ձմեռում: Սրանց մի տես, ճարպակալել են, բարաքը վերածել են խոզանոցի, իրենք էլ խոզերի պես . . . Ես ձեզ . . . ես . . . ձեր . . .

Բոլորն էլ գիտեն, որ եթե վերակարգիչի մուտքի ժամանակ Նուրանբաևը բարաքով մեկ ազդարարեր «ուշադրություն», նա չէր հարձակվի ո՛չ ավագի, ո՛չ օրապահի վրա: Ընդհանրապես այդ «ուշադրությունը», երբ հնչում է բարաքներում, խիստ տպավորիչ ազդեցություն է թողնում մարդկանց վրա, նրան հաջորդում են քար լռություն ու լարվածություն: Ըստ օրենքի, «ուշադրություն» ազդարարվում է, երբ ազատ աստիճանավորներն են բարաք մտնում . այդ չի խանգարում, որ կալանավոր պաշտոնյաներն իրենց շոյված զգան: Եթե ավելի խոհեմ օրապահները, խախտելով օրենքը, իրենց մուտքը նույնպես զգացնել տան բարաքին՝ եթե ոչ առաջին կարգի, գոնե երկրորդ, երրորդ կարգի հանդիսավորության ազդարարությամբ . . .

Սիդորովը մոտեցավ Աշոտ դայուն .

— Դու խնդրել ես պետից, որ այդ Տայշետից եկած հայը քո բրուտանոցո՞ւմ աշխատի:

— Այո, ընկեր Սիդորով:

— Լավ, ես կհայտնեմ նրան, որ վաղը աշխատանքի դուրս գա, բայց շատ եմ վախենում, որ բան դուրս չի գա:

Յատուկ Դոէմ

— Փորձը փորձանք չէ, ընկեր Սիդորով:

— Փորձիր, — ասում է նա, ֆաներայի վրա մի բան է նշանակում և դուրս է գալիս բարաքից գործնական քայլերով: Նրա դուրս գալուց հետո բարաքի ավագ Կոլոկոլնիկովը հարձակվում է Նուրանվանի վրա .

— Շուն-շան որդի, հազար անգամ ասել եմ, գոռա՛ «внимание», երբ այդ շունը ներս է մտնում . . .

Մի թանկագին բան գտած մարդու երջանիկ ժպիտով, սև աչքերը շողացնելով, բուշլատի մեջ փաթաթված, բարաքից դուրս է սահում Իմամ Ալի Բադիրբեգովը: Բոլորը գիտեն, որ նա գնաց վերակարգիչ Սիդորովին զեկուցելու, որ բարաքի ավագ Կոլոկոլնիկովը նրան «շուն» անվանեց: Վաղուց նա համառ աշխատանք է տանում ավագին գահընկեց անելու ուղղությամբ — նրա տեղը բռնելու համար: Իսկ դա հեշտ գործ չէ, Կոլոկոլնիկովը կոմենդանտի մարդն է . բարաքի բնակիչներից որևէ մեկը ծանրոց է ստանում, նա իր ստացած բաժինը կիսում է կոմենդանտի հետ, ի՞նչ կարող է անել Իմամ Ալին այդ ամեհի դաշնակիցների դեմ: Բայց նա չի հուսահատվում, հետևում է ավագի ամեն քայլին և երազում է այն օրը, երբ կկանչեն նրան գրասենյակ և կհրամայեն .

— Ընդունիր համար յոթ բարաքը . . .

Յատուկ Պոէմ